ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<26>> սեպտեմբերի 2025թ. N ՄՈ/862 -Ա

ք. Արմավիր

«ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԱՅԱՆԵ ՊԱՐՈՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Գայանե Պարոնյանի 2025 թվականի սեպտեմբերի 24-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Բամբակաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գայանե Պարոնյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա ամենամյա հերթական երկարացված արձակուրդի չօգտագործած մասը՝ 2025 թվականի հոկտեմբերի 1-ից 16-ը ներառյալ՝ 12 աշխատանքային օր տևողությամբ:
2. Գայանե Պարոնյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Բամբակաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Բամբակաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Ջիվան Այվազյանին:
3. «Բամբակաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Ջիվան Այվազյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հոկտեմբերի 1-ից 16-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Գայանե Պարոնյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի հոկտեմբերի 17-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**